

իր առաջին մուտքն էր գործում հայ մատենագրության և հայ տպագրության պատմության մեջ:

Այդ առիթը մեզ ընծայել էր Երևանի Պետական Մատենադարանի № 8279 ձեռագիրը, որի հետ կազմակից էր նորահայտ հատորիկը.

«Պատմութիւն Թովմայի առաքելոյն ոտանաւոր չափիք, ասացեալ յումեմնէ Թովմայ երիցւէ Ագուլեցոյ, ի լիակատար պատմութենէ նորին»²:

Հստ տպագրության հիշատակարանի՝ այս գիրքը հրատարակված էր 1734 թվականին, սակայն տպագրության վայրն ու տպարանը չէին նշված. իսկ մենք պարզել էինք, որ դա պոլսահայ տպագրիչ՝ Սարգսի որդի Մարտիրոս դպրի տպարանի գործերից է:

Այդ հատորի հիմնական բովանդակությունը՝ ավելի քան 1000 տողերից բաղկացած «Պատմութիւն Թովմայի առաքելոյն» կրոնա-պատմական բանաստեղծությունն է, որի հիմքը Նոր Կտակարանի մի քանի այսպես կոչված առաքելական անվավերներ են կազմում. իսկ հատորի վերջում գտնվում է՝ **«Տաղ գովասանութեան սրբոյն Թովմայի առաքելոյն՝ ի նոյն իրիցէ»**, որի տնագլուխ տառերը հոդում են՝ **«Թովմասի է»**:

Թովմաս Ագուլեցին 1705 թվականին է գրել «Պատմութիւն Թովմայի առաքելոյն»-ը, ինչպես ասում է նա բանաստեղծության հիշատակարանային մասում, որից և երևում է, որ հեղինակը դեռևս այդ թվականներին էլ այդի էր.

**Ի թականիս Հայոց Մեծաց,
Քրսան երեք յոբելինաց,
Չորս ամուլ թօք առ սա փական,
Լիճի այս երգ ի յոտք հանած:**

**Հնորեալ ըզսա յերից ճառաց,
Հստոյզն առեալ հրնոց գրրաց.
Այրի էրեցս մահամբ հարած,
Թովմաս ի գեղոյն յԱգուլեաց:**

Ուրեմն՝ այրի քահանա Թովմաս Ագուլեցու մի երրորդ՝ անձանոթ գործն է **«Բան ոտնաչափ վասն սրբալոյս մեռոնի»** բանաստեղծությունը, որ մենք ներկայացնում ենք այսօր և որը, ինչպես նշեցինք, շարադրված է 1729 թվականին:

Այս գրվածքի կարևորությունն այն է, որ ոչ միայն մեզ որոշ տվյալ է հայթայթում Թովմաս Ագուլեցու կյանքի տևողության մասին, այլև իրազեկ է դարձնում Կարապետ

Ուլնեցու կաթողիկոսության օրով էջմիածնում տեղի ունեցած պատմական մի հիշատակելի իրողության՝ 1729 թվականի մեռնօրհնության մասին:

Ամենայն Հայոց կաթողիկոս Կարապետ Ուլնեցու օծումը, ժամանակի քաղաքական հանգամանքների բերմամբ, տեղի էր ունեցել Կ. Պոլսում՝ 1726 թ. փետրվարի 27-ին և ինքը, Այրարատյան աշխարհում տիրող պատերազմական դրության պատճառով, 1728 թվականի սկզբներին հագիվ էր կարողացել հասնել էջմիածին, ուր և քիչ հետո, 1729 թվականի հոկտեմբերի 2-ին, մահացել էր³:

Էջմիածնում նրա ունեցած գործունեության մասին ոչինչ չեն ավանդում պատմական աղբյուրները, ի բաց առյալ այն երկու փոքրիկ տեղեկությունները, թե «ետ նկարել զպատկերս երկոտասան առաքելոցն ի ճակատ աագ խորանին եւ ետ ծաղկել ոսկեզօծ գունօք. ունի հոգացեալ եւ զգրեանս օգտակարս»⁴, այսինքն՝ էջմիածնի պաշտոնական վավերագրերի և կալվածագրերի կարգավորումը:

Թովմաս Ագուլեցու ոտանավորի նյութն ու տվյալներն այժմ ասում են, որ Կարապետ Ուլնեցին, իր կարճատև կաթողիկոսության շրջանում, 1729 թվականին, էջմիածնում կատարել է նաև մեռոնի օրհնություն, որն, ինչպես գիտենք, տեղի էր ունենում համագային հանդիսավորությամբ:

94 տներից բաղկացած այս ոտանավորը մեռոնի գովերգությունն է: Ունի միօրինակ հանգավորում՝ **-եալ վերջավորությամբ**: Տոդերի չափն է՝ 4+4+4:

Այս բնագիրը հրատարակության պատրաստելիս՝ մենք հարկադրված եղանք ու-

³ Հ. Միքայել Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 801—805: Մաղաքիա արք. Օրմանյան, «Ազգապատում», հտ. Բ, Կ. Պոլիս, §§ 1944 և 1954:

Մխիթար Սեբաստացու «Քերականութիւն գրաբանի լեզուի հազկազան սեռի» գրքի առաջին տպագրությունը լույս է տեսել Վենետիկում «յամի տեառն 1730, յունուարի 21, ի հայրապետութեան տեառն Կարապետի Հայոց կաթողիկոսի» (ըստ անվանաթերթի): Այս տեղեկությունը փաստական նշանակություն չունի, որովհետև, ըստ ընդունված սովորության, վախճանվող կաթողիկոսի անվան հիշատակությունը շարունակվում էր մինչև հաջորդի ընտրությունը, իսկ Կարապետ Ուլնեցու հաջորդը՝ Արքահամ խոշաբեցին ընտրվել էր 1731 թվականին: Հմմտ. Չամչյան, էջ 805: Օրմանյան, § 1965:

⁴ «Ջամբո գիրք... համաժողովեցեալ եւ շարադրեցեալ ի Սիմեօն: ցաւաբար և վշտակոծ կաթողիկոս: Երեւանցոյ», Վաղարշապատ, 1873, էջ 28:

² Այս տպագիրը հետագայում հանվեց № 8279 ձեռագրի կազմից և գտնվելից Մատենադարանի հնատիպ գրքերի շարքում՝ 1624 թվականարի տակ: Առայժմ միակ ծանոթ օրինակն է աշխարհում:

շաղկապումն դարձնել մի քանի երևույթների վրա:

Տաղաչափության մեջ կիրառված էր ըթագրությունը, բայց՝ մասամբ միայն, և մենք ստիպված եղանք այն դարձնել ընդհանուր, որպեսզի ապահովվի տողերի ընթերցման ճշգրտությունը:

Որոշ տողերում վանկերի թիվն ակնհայտ կերպով ավելի էր. այս դեպքում մեզ իրավունք չենք վերապահել ըստ կամս կրճատումներ կատարելու և թողել ենք՝ ինչպես որ կա: Օրինակ՝ 51-րդ տան մեջ՝

**Հայց իղըս այս եւ լըրացո՞ ըսքանչացեալ
եւ զարդարեալ:**

Կամ 77-րդ տան մեջ՝

**Այս իղ քաղցրութեան ըստ Յովելեայ լե-
րանց բըղխեալ:**

Եվ կամ 87-րդ տան մեջ՝

**Եւ սըրբեցես զամենեսին առ հասարակ
զըարճացեալ:**

Ընդհակառակն՝ կան պակասավանկ տողեր: Այդ պակասները, եթե հնարավոր չի եղել լրացնել, այդպես էլ թողել ենք. իսկ հնարավորության դեպքում՝ լրացրել ենք անկյունավոր փակագծերի մեջ: Օրինակ՝ 45-րդ տան առաջին տողում և 70-րդ տան երկրորդ տողում:

Երկու տող, արտագրողի անուշադրության հետևանքով, բաց է մնացել և այդպես էլ թողեցինք: Տես՝ 6-րդ և 8-րդ տները: Ինչ-ինչ բառեր մեզ համար մնացին անվերծանելի. ուստի և հարկադրվեցինք այդ տեղերը նշանակել բազմակետով և կամ՝ հարցական նշանով: Տես հետևյալ տները. 48, 54, 56, 74, 76, 79, 80, 85 և այլն:

Կային անուշադրությամբ կրկնված բառեր, որոնցից ակնհայտորեն ավելորդ համարվածները կրճատել ենք, բայց տեղում այդ մասին հատուկ նշում չենք կատարել: Բերենք մի քանի օրինակներ՝ փակագծերի մեջ ցույց տալով կրճատված բառերը:

31-րդ տան մեջ՝

**Նոյնըն շնորհիւ մեծ Աբրահամն (մեծ)
հաղորդեցեալ:**

Հաջորդ օրինակից երևում է, որ աչքի վրիպմամբ բառը կրկնվել է երկու հաջորդական տողերում: 16-րդ տան մեջ՝

**Այս իղս աւանդ սրբոց մերոց (ես է)
բեղմնաւորեալ**

**Որք օրհնութեամբ ձեռամբ եղս է ներ-
գործեալ:**

Այսպես նաև 30-րդ տան մեջ՝

**Ըզմի լեզուս առաքելոցն (հրով) բազ-
մացուցեալ**

**Հըրով շնորհացս ի յայն շինումն նոր
հիմնեցեալ:**

Այս կարգի թերությունները կարելի է առավելապես վերագրել արտագրողին կամ արտագրողներին, եթե մասնավոր նկատի ունենալ, որ № 25 ձեռագրի այս ընդօրինակությունը գուցե և իր հերթին կատարված է ուրիշ ընդօրինակություններից:

Այնուհանդերձ, այս արտաքին թերությունների հետ միասին, մեր ուշադրությունը գրավում է մի ուրիշ հանգամանք, որը կարող է կապ ունենալ նաև հեղինակի հետ: Դա լեզվի քերականական օրենքների անհարկի խախտումն ու ոտնահարումն է, մի քան, որը բավականին հաճախակի է և չի արդարանում ոչ տաղաչափական պահանջներով և ոչ էլ որևէ ուրիշ բանով: Օրինակ՝ հայցականակերտ գ նախդրի անտեղի կիրառումը: 53-րդ տան մեջ՝

**Այն իղ հեղիկ Ահարոնեան գըլուս
օծեալ**

**Ջոր կարգ առ կարգ մինչ ի գրապանս
լինիւր հասեալ:**

Նաև 66-րդ տան մեջ՝

**Ջոր սոյն շնորհէ չարքըն լինին յերկրէ
բարձեալ:**

43-րդ տան մեջ՝

ԸզՍողոմոն իղիս լինի թագաւորեալ:

80-րդ տան մեջ՝

**Ջորոյ շնորհօք լինի յիղս այս լուսա-
ւորեալ:**

Եվ դեռ ուրիշ խախտումներ, ինչպես՝ «Այնըն շնորհօք որ քարշեցեր գեմոքն ընտրեալ» (տուն 47), «Եւ ի իղովս հոգին լինի հոգոյն ծընեալ» (տուն 82) և այլն:

Իսկապես դժվար է ասել՝ այս ակնհայտ խախտումները հեղինակի՞ն են, թե ուրիշներից:

Հիշեցնենք, որ ժամանակին մենք նույն հեղինակի «Պատմութիւն Թովմայի առաքելոյն» աշխատության մասին հատկապես գրել էինք:

«Այս բանաստեղծության մեջ նշելի է տաղաչափական արվեստի անթերի կիրառումը, որից փոքրիկ կամ հազվադեպ շեղումները պետք է վերագրել ոչ թե հեղինակին, այլ հրատարակիչներին»:

Մենք կարող էինք մոտավորապես նույն ասել նաև այդ աշխատության լեզվի մասին: Բայց ինչո՞ւ այդքան տարբերություն Թովմաս Ագուլեցու այդ «Պատմութեան» և մենոնին նվիրված նրա այս «Բան ոտնաչափ»-ի միջև:

Այս հանգամանքը մեզ մղում է մտածելու, որ Թովմաս Ագուլեցու «Պատմութիւն»-ը հեղինակի գրչից դուրս եկած ժամանակ

⁵ Էջմիածին (ամս.), 1949, մարտ-ապրիլ, էջ 43:

հավանաբար այնպիսի մակարդակով է եղել, ինչպիսին այժմ ներկայացնում է մեռուների «Բան ոտնաչափ»-ը, բայց տաղաչափության և քերականության ստումով պետք է սրբագրությունների ենթարկված ու վերախմբագրված լինի Ագուլիսի միաբան և մտավորական գործիչ Միքայել վարդապետ Գողթնեցու կողմից⁶։ Միքայել Գողթնեցին է, որ Թովմաս Ագուլեցուն հորդորել էր շարադրել այդ բանաստեղծությունը և ստիպողաբար պահանջել էր նրա կատարումը, մի բան, որի համար հեղինակն իր երախտագիտությունն է հայտնել իր գործի վերջում⁷, և հետո էլ, տանելով Կ. Պոլիս, տպագրել էր տվել, ինչպես հայտնում է գրքի տպագրության հիշատակարանը⁸։

Կարծում ենք, որ այսպես էլ եղած կլինի «Պատմություն Թովմայի առաքելուն»-ը և մենք այսօր պետք է գոհ լինենք, որ մեր ձեռքում ունենք Թովմաս Ագուլեցու մի այնպիսի գործը, որը համեմատաբար մնացել է «անաղարտ»։ ասում ենք՝ համեմատաբար, որովհետև մեռուների «Բան ոտնաչափ»-ն արտագրողը կամ արտագրողները հավանաբար իրենք ևս իրենց ներդրումն են ունեցել նրանում՝ նրա դժվարահասկանալի մասերը որոշ չափով սրբագրելով և դրանով՝ երբեմն պարզացնելով և երբեմն էլ՝ աղավաղելով։ Այնուամենայնիվ՝ պետք է նկատի ունենալ, որ Թովմաս Ագուլեցու այս վերջին գործում արտակարգ թվացող ամեն մի երեկոյթ լեզվական խախտում չէ։ Նրա մտական քարտաշային երևույթներ, որոնք լեզվի համար, նրա զարգացման այս կամ այն շրջանում և միջավայրում, օրինաչափական են։ Օրինակ՝ բացառական հոլով՝ առանց «ի» նախդրի. իսկ առանց «ի» նախդրի բացառականը՝ ձևով հաճախ նույնանում է սեռականի հետ, հատկապես հոգնակիում։ Ահա մի օրինակ 10-րդ տնից.

Ձայս ոչ օտար վրկայութեանց է կացուցեալ,
Այլ ի սըրբոյ Նարեկացուն առանդ բացեալ։

Պետք է հասկանալ՝ «ոչ օտար ի վկայութեանց»։

Այսպես և 66-րդ տան մեջ՝

Եւ հասանիլ շնորհաց իւղոյդ վայրս որ լըքեալ։

Պետք է հասկանալ՝ «ի հասանիլ» և «ի վայրս»։

Այսպես նաև 22-րդ տան մեջ՝ «հնոյն առեալ» (փխ. «ի հնոյն առեալ» և այլն)։

Այս և նման բնույթի այլ երևույթներ, որոնց վրա չենք ծանրանում, լեզվական խախտումներ չեն։

Անցնենք մի ուրիշ փաստի։ 2-րդ տան մեջ՝

Առանց քեւ հոգին աստած շնորհս չէ հեղուցեալ։

Այս տողում՝ «առանց քեւ»-ի մեջ պետք է տեսնել ոչ թե քերականական մի տարրական կանոնի խախտում՝ համարելով, որ պետք է լիներ «առանց քո», այլ պարզապես պետք է նկատել, որ դա կապ ունի հեղինակի քերականական մտածողության ինչ որ մի յուրահատկության հետ։ Այստեղ «քեւ»-ը իսկապես «քեւ» է (գործիական հոլով)։ Հեղինակն ուզում է ասել, որ Սուրբ Հոգին իր շնորհը միշտ էլ քեզանով կամ քո միջոցով է հեղում մարդկանց վրա, իսկ «առանց քեւ», այսինքն՝ առանց քեզանով՝ քո միջոցով լինելու այդ բանը տեղի չի ունենում։

Պետք է ասել, որ լեզվական երևույթների ուսումնասիրության համար այստեղ կան մի շարք փաստեր, որոնք, խելացիորեն զուլվելով աղավաղումներից, ուսումնասիրողին կտան օգտակար արդյունքներ։ Թովմաս Ագուլեցին այստեղ ունի նույնիսկ բազմաթիվ նոր բառակերտումներ, որոնցից մի մասը եթե քոնագրուսիկ է՝ տաղաչափության պարտադրանքով ստեղծված, մի մասն էլ բնական է, ստեղծված՝ այնպիսի պահերին, երբ լեզվական մտահոգություններ առհասարակ չճանաչող հեղինակը, իր նյութի ներշնչմամբ տարված, չէր էլ գգում, որ ինքը լեզվի համար նոր բառեր է կերտում։ Ահա, օրինակ, 71-րդ տան հետևյալ տողը.

Ձի ի քեն էր եւ քեզ եղեւ քեաւորեալ։

Ընթերցողը կարող է շատ լավ զգալ այս քեաւորեալ բառի իմաստը, բայց չի կարող տալ նրա ձևակերպումը՝ բառարանային եղանակով։ Եվ դարձեալ՝ այստեղ ևս այս ինքնատիպ բառն արտահայտում է հեղինակի քերականական մտածելակերպի մի յուրահատուկ կողմը։ Իսկ եթե փորձենք ուղղակի հեղինակից հարցնել այդ թեմայի քեաւորեալ բառի իմաստը, նա մեզ մոտավորապես կպատասխանի 72-րդ տան հետևյալ տողով.

Հաստատեա քե՛ւ, զի լիցուք մեք քե՛ւ ընթացեալ։

Ուրեմն՝ քեաւորեալ-ը նշանակում է «քեւ հաստատեալ եւ քեւ ընթացեալ»։

⁶ Նրա մասին տես անդ, մայիս-դեկտեմբեր, էջ 59—60։

⁷ Հմմտ. անդ, մարտ-ապրիլ, էջ 43։

⁸ Հմմտ. անդ, էջ 42։

Բավական համարելով մեր խոսքը Թովմաս Ագուլեցու «Բան ոտնաչափ վասն սրբալոյս մեռոնի» չափածոյի մասին, հրատարակության ենք հանձնում նրա բնագիրը:

Ի լրումն Թովմաս Ագուլեցուն վերաբերող կենսագրական տվյալների՝ ավելացնենք այն տեղեկությունը, թե Աբրահամ կաթողի-

կոս Կրետացին 1737 թվականի Կարմիր կիրակի օրը Ագուլիսում եպիսկոպոս է ձեռնադրում «զաւագ երէցն Ագուլեաց գտէր Թովմայն՝ միաբան սուրբ Էջմիածնայ»⁹:

⁹ «Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870, էջ 77:

365ա ԲԱՆ ՈՏՆԱՉԱՓ ՎԱՍՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՌՈՆԻ
ԱՍԱՑԵԱԼ Ի ԹՈՎՄԱՍ ԱՅՐԻ ՔԱՀԱՆԱՅԷ

(Ձեռ. № 25)

1. Թորեալ իւղ սուրբ, ամուն կենաց [ի] քեզ կըցեալ,
Յոգնաւորի հոգոյն շնորհ ի քեզ լըցեալ,
Դու եւ բաշխող շնորհաց, ով գամն առատ բացեալ,
Բազմագումակ իմաստութեամբ յոյժ յոյժ լըցեալ:

2. Ուստի նախ քան զըստեղծումն էից եւ կացեալ,
Քանգի հոգոյն ընդ գործունեայն եւ միացեալ,
Առանց քեւ հոգին աստած շնորհս չէ հեղուցեալ,
Ըստոյգ ունիս գործոցն հոգոյն շնորհօք լըցեալ:

3. Վըկայ հաստատ ի սկըզբանէ առ մեզ կացեալ
Ի վերայ ջուրց շըրջիլ հոգոյն եւ էր կըցեալ,
Անտի ունէր խորհուրդ հրաշից առ քեզ լըցեալ,
Որով եհեղ յաղագս մարդկան քեղմնացուցեալ:

4. Մարգարէին շնորհս զանազանս որ թընցեալ,
Յեռեալ կըցեալ ծաղկին Յեսսեան որ է օծեալ,
Քոյդ մակագրէ օծումն առ բանն միակնացեալ
Հեղումն շնորհացդ է այս խորհուրդ մեզ ծանուցեալ:

5. Ահագնագործ ունիս խորհուրդ հոգով օծեալ,
Անորիշ իմն ընդ գործս հոգոյն անել կըցեալ,
Գիտութեամբ եւ իմաստութեամբ միացուցեալ,
Ի նոյն հոգով անել գումով եռացուցեալ:

6. Սա եւս լինի ասելն գուշակ չըհեռացեալ,
Զի լեռնամասս ի գլուխ ջըրոյն երբ եւ ածեալ,
Լեռոյն սուրբ եւ քընակութեամբ հոգոյն լըցեալ:

7. Այլ եւլս ջուր սուրբ նըմանիս ի ծով լըցեալ,
Ծածկին ներքոյ քոյոյ գնացիցն երբ եւ ածեալ,
Ուստի ասէ՝ է շնորհօք տեառն երկիր լըցեալ,
Որպէս ըզջուրս որք գլուխ ծովուց են կացուցեալ:

8. Յանուն տեառն ունիս ըզքեզ միացուցեալ,
Գըրեալ ձեռամբ հոգոյն սըրբոյ խրախոյս բարձրեալ,
Երբեմն ունիս նիւթ ի հոգիս մեր ներգործեալ:

9. Բեմատեսն ի քեզ եղ աւանդ արձանացեալ,
Եղ ի քեզ հիմն դրանըն երկնից նըշան ցուցեալ,
Զոր հաստատէ տէրըն բանի առարկացեալ
Անուն անել եւ ահաւոր արձան օծեալ:

¹ Զեռագրում՝ արձան ցուցեալ:

10. Ի յայս հիւթոյս երրորդութիւնդ է խառնեցեալ
Իմանալի շնորհօք էիդ իւղոյս կըցեալ.
Զայս ոչ օտար վըկայութեանց է կացուցեալ,
Այլ ի սըրբոյ Նարեկացոյն աւանդ բացեալ:

11. Քանզի ի քէն ունի այս իւղ դեղ ներգործեալ,
Անուն օրհնեալ իմանալի շնորհօք լըցեալ.
Այս շնորհ հեղլի ներգործելի յոյժ հրաշացեալ,
Հեղեալ վերնոյդ անընձեղի թեւեռեցեալ¹:

12. Այս իւղս յաւանդ կընիք ամեղ եւ սքանչացեալ,
Որք ի սմանէն ունին ըզկերպ՝ կոչին օծեալ.
Այս իւղ կարող քում կոչմանէն հրաշակերտեալ
Շնորհաց հոգոյդ քոյոց կամաց միակըցեալ:

13. Հայրն աշխարհի այդ քոյ հոգոյդ կենդանացեալ,
Ուստի կամացդ շնորհօք հոգոյդ է անցեալ,
Իւղեալ զանուն քումէ հեղեր առ մա լըցեալ,
Ձեռնադրութեան ըսկիզբն որոյ եմք յառաջեալ:

14. Այլ մախ ըսկիզբն եւ լետ սկըզբան դու եւ բարձրեալ,
Յաւիտեանդս յաւիտենից աներբացեալ.
Ըստ ձայնի՞ն դու եւ ընդ աջմէ օծեալ՝
Օծիչ, օծեալ, օծեցուցիչ միմեամբ փակեալ:

15. Նոյն իւղս հեղեալ հեղողդ շնորհացդ միակըցեալ,
Իմանալի կերպիւ ի կերպ յայս միացեալ.
Ի քում գոյէդ այս գոյ ոչ զատ, ոչ բաժանեալ,
Ի մեզ մասամբ բոլորն ի քէն ոչ զատեցեալ:

16. Այս իւղս աւանդ սըրտից մերոց բեղմնատրեալ,
Որք օրհնութեամբ ձեռամբ եւրս է ներգործեալ.
Այս հեղուամամբ Յակոբ ունի աւանդ գըծեալ՝
Ի գլուխ որդոցն աջով աջոյն ներհեղուսեալ:

17. Յոյժ գեղեցիկ իւղս այս շնորհացըդ քոց կըցեալ,
Զի թանձրութիւնն իմանալին ունին մածեալ.
Որպէս ասել իմանալեօք կերպ է գործեալ,
Այոցն հեղուլ շընչով միթոյն է ներգործեալ:

18. Է միմչ լըսի որպէս խորհուրդն որ խօսեցեալ,
Զի թանձրանայ ծածկեալն յականջս ձայնէն լըցեալ.
Այսպէս իւղս այս միթ ի յանմիթ ձայնէդ առեալ
Առնէ հըրաշս իմանալիս կերպ[ա]ցուցեալ:

19. Բարի անուամբ իւղս այս կընքի հովիւն օծեալ,
Նոյնն հաստատի² չէ որ բարի, բայց Էնն բարձրեալ.
Գեղեցիկ այս վըկայութեամբ է հաստատեալ
Գալով բարի իւղս այս միայն յԱստուած կըցեալ:

20. Անտի հեղու ի գլուխ սըրբոյն վերնոյն իջեալ
Եւ ի գլխէն միմչն զգրապանս այս շնորհ հեղեալ,
Յոյժ հրաշագան մի առ ըզմի սանդուխտ կազմեալ,
Վեհէն միմչեւ ի զդըռնապանս այս շնորհ հեղեալ:

365բ

¹ Ձեռ. քննարկեցուց:

² Ձեռ. հատի:

21. Ներպատրաստեալ գոյ զօրհանութիւնդ փառաւորեալ
Եւ ըզկեանալդ յախտեմից սովաւ լըցեալ,
Դու ի սա եւ սա ի քեզ անդրէն դարձեալ
Որպէս ըզխօսս եւ՝ զծայնն անդրէն ամուր փակեալ:

22. Այս իւղ միթեայ մաքրացուցիչ հընոյն ստեալ
Կըցի ընդ այն որ Յորդանան վերուստ վառեալ,
Զորդ նըշանն ի յոտսըն ըզհիմն ունի կրուեալ
Օծեալն ի գլուխն հոգի հեղումն ի նորս գուշակեալ:

23. Ռաբիցըն հնոյ օծմամբն եղջերք էր սաւանդեալ
Իսկ ի նորումս յայտնի զհոգին լերկնից հեղեալ,
Նոցայն միթի ճարպոյն ունէր գործի հաստեալ՝
Մերումս երկաթ միթ անմիթեան պարստեցեալ:

24. Սոյն իւղըս սուրբ ըստ հընոյն ծառ ծաղկաւտեալ
Եւ ի նորումս շնորհօք հոգոյդ պըտղածընեալ,
Անդէն առ մեծս յաճախալէս եւ ներգործեալ,
Աստէն և փոքր աւագանէն շնորհագարդեալ:

25. Ուստի նախնոյն չունելոյն քեզ մայրըն գլորեալ
Չէիցն եղեալ չեկաց ի նոյն որ վիճակեալ,
Օծմամբ ձայնիդ միրհեալքն ի քուն² զէնքս ոչ ամեալ՝
Եղեն վայրէն փափագելի արտաքսեցեալ:

26. Իւղս այս բարձր ըզկնի որոյ սակաւ անցեալ
Որովհետեւ չեղեն շնորհացդ քոյոց լըցեալ,
Զենոք միայն յայսըմ օծմամբ առ քեզ ճըզտեալ,
Որպէս ըզգող յարեզակնէդ հիւթ քարշեցեալ:

27. Ռոտեալ միայն հայրըն երկրորդ քոյով օծեալ
Զոր ուխտեցեր առ տապանաւ եղեւ կըցեալ,
Ի վեր անհուն ջըրոցըն նա որ բարձրացեալ
Որպէս իւղ ի գլուխ ջըրոյն եղեւ զերծեալ:

28. Բայց իւղըս այս յորս և շնորհօքդ է ներգործեալ
Ըստ սահմանի իւղոյն պահեալ ի գլուխ զըտեալ,
Եւ որքն ոչ են խորհրդոց քոց կըցորդեալ
Զրով փորձութեան՝ կորեան մեղօք խըրախուսեալ:

29. Ծընորհ այս սուրբ զարմանահրաշն աներկորդեալ
Որպէս ըզծայն հողմոց նըման ունի հընչեալ,
Երբեմըն որ ի սըմանէ լինի սըփոռեալ
Որ մի բարբառ յաշտարակում եղեւ ցըրեալ:

30. Ըզմի լեզուս առաքելոցն բազմացուցեալ
Հըրով շնորհացս ի յայն շինումն նոր հիմնեցեալ,
Անդէն եքակ որ անշընորհ էր բարձրացեալ
Ըզնոր զենումնս ի վեր յերկինս ոսա կացուցեալ:

31. Նոյնըն շնորհիւ մեծ Աբրահամն հաղորդեցեալ
Որ ի բանէն աստածայնոյ եղեւ օրհնեալ,
Եւ Մեղքիւնդ տիպն առաջին որ էր օծեալ,
Որ Աբրահամ կըրկին սմանէ եղեւ օծեալ:

¹ Զեռ. հաստաւտեալ:

² Զեռ. քոյն:

³ Զեռ. օծեալ:

32. Որով ըսկիզբն ցիթեղէն իւղ նմանէ բարձրեալ
Որ և բնակիր ի յիդասունն իւղով օծեալ:
Որ յետոյ ոտք մարմնացելոյն զետեղեցեալ
Եւ հրեշտակաց պատաղոցն անդր իւղ յեղուցեալ:

33. Բախճան¹ շնորհօք շիրիմ նախնոյն մերոյ լըցեալ
Յորժամ օծեալդ ունէր ըզձեռաւոր տարածեալ:
Անկեալ՝ ի կորուստէն ձեռամբ քոյոյ կանգնեալ
Յորժամ լինիր վըտակ կըրկին կողէդ բըղխեալ:

368ա 34. Հնոյ օրինին երբեմն ունի օրինակեալ,
Ի ճարպ գոհիցն որ ի հընոյն լին՝ ճարակեալ:
Եւ երբ լինէր ի գլուխ ընծային ձեռն եղեալ
Յայնժամ լինէր յիսկութենէդ ընդունեցեալ:

35. Այս իղս ունի վատումըն լոյս լուսագեցեալ
Որպէս ըզճարպ առ պատարագ լինի վառեալ:
Որպէս ճրագ² ի մառախլութէն ի լոյս ածեալ³
Սոյնպէս այս իւղ շնորհագեղուն լուսով փայլեալ:

36. Լաւ մեկնէր Յովսէփ շնորհաց այսու լըցեալ
Զի ոչ գլորիր այլ տէր ունէր միշտ բեւեռեալ,
Որոյ շնորհօքն լինիր իշխան երկրին գերեալ
Եւ սոյն շնորհօք ոսկերքն եւս լինի ազատեալ:

37. Իսկ Մովսէսն այն որ ըստ անուանն էր վերձանեալ
Որ տապանաւ⁴ ի խաղ գետոյն կայր վերացեալ:
Սովիմք շնորհիւ անդէն ի մէջ ջըրոյն օծեալ
Եւ առաջնորդ իսրայէլեան զնա կացուցեալ:

38. Մեծ ի խորհուրդն այն բարութաւըն⁵ սըրըսկեալ
Ունէր այս շնորհ թէպէտ այլովք ասէ յայտնեալ:
Պահեալ պաշտօն յափտենից էր հրամայեալ⁶
Զի այն մշանիք տեսողն շնորհօք եղեն փայլեալ:

39. Եւ ի ձըգել աջ Մովսէսի ջրոյն ծովացեալ
Այսու շնորհօք հողմով հոգոյն յոյժ պատառեալ,
Յորս մըկըրտի ի նոյն ա[ն]ցմամբն շնոր[հա]զանեալ,
Եւ փարաւն զօրօքն անշնորհ խըրախտեալ:

40. Ռահ⁷ շնորհալի այս մեծ խորհուրդ մեզ ծանուցեալ⁸,
Այսու շնորհիւ ըզդատութիւն ջրոյն քաղցրացեալ:
Որպէս առ փայտըն փըրկարար շնորհ այս կըցեալ
Աստի նոյնոյ ունի ըզնոյն ըսքանչացեալ:

41. Որ զայս շնորհիւ Յեսու լինի ձեռնադըրեալ
Որում վերնոյն շնորհաց հոգին ի նա զեղեալ:
Աջ Մովսէսի շնորհօք ի գլուխ նորին եղեալ,
Զմեծն Իսրայէլ տեսողն բանի ի նա յանձնեալ:

¹ Ձեռ. բախճանակ:

² Ձեռ. զճարպ (նախկին տողում գտնվող զճարպ-ի ազդեցությամբ):

³ Ձեռ. ի մառախլութէն է լոյս ածեալ:

⁴ Ձեռ. որտալ:

⁵ Ձեռ. բրուրն:

⁶ Ձեռ. հրամայեցեալ:

⁷ Ձեռ. ռէհ:

⁸ Ձեռ. խորհուրդ մեծանցեալ: